# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հուլիսի 2024 թվականի № 274-Ա**

## ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի մարտի 12-ի № 118-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի հուլիսի 2-ի № Ե-4436 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական ***Ստեփան Բաղդասարյանին*** 2024 թվականի հուլիսի 3-ին, մեկ օրով գործուղել քաղաք Աբովյան՝ «Աբովյանի № 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար ձևավորված մրցութային հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**2024 թվականի հուլիսի 3**
**ք. Հրազդան**

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ